Պացիենտի հուշաթերթ

Վալպրոատ: **Հակաբեղմնավորիչների կիրառում և հղիություն. ինչ պետք է իմանալ**

Պացիենտի հուշաթերթ

Այս հուշաթերթը նախատեսված է աղջիկների և կանանց, ինչպես նաև նրանց խնամակալների/օրինական ներկայացուցիչների համար, ովքեր կիրառում են վալպրոատ պարունակող ցանկացած դեղ:

Այն հադիսանում է վալպրոատով բուժում ստանալու ընթացքում հղիության կանխման ծրագրի շրջանակներում իրականացվող ռիսկերի նվազեցման միջոցառումների մի մաս:
Այս հուշաթերթը պարունակում է հղիության ընթացքում վալպրոատ կիրառելու ռիսկերի մասին հիմնական տեղեկություններ:

Հղիության ընթացքում էպիլեպսիայի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Էպիլեպսիա. ինֆո կայքում՝ https://epilepsyinfo.ru/women/beremennost/

Այս հուշաթերթը նախատեսված է վերարտադրողական տարիքի աղջիկների և կանանց, ինչպես նաև նրանց խնամակալների/օրինական ներկայացուցիչների համար, ովքեր օգտագործում են վալպրոատ պարունակող ցանկացած դեղ:

- Հուշաթերթը պարունակում է հղիության ընթացքում վալպրոատ կիրառելու հետ կապված հիմնական ռիսկերի մասին տեղեկատվություն:
- Կարևոր է, որ կարդաք այս հուշաթերթը, եթե բժիշկը Ձեզ նշանակել է վալպրոատ՝ որպես բուժման լավագույն տարբերակ:
- Հղիության ընթացքում վալպրոաթթվի օգտագործման ռիսկերը բոլոր աղջիկների և կանանց համար նույնն են:

Կարդացեք այս հուշաթերթը, ինչպես նաև դեղի փաթեթում տեղադրված ներդիր-թերթիկը:

- Կարևոր է, որ Դուք կարդաք հրահանգները, նույնիսկ եթե որոշ ժամանակ ընդունել եք վալպրոատ, քանի որ այն պարունակում է դեղի վերաբերյալ ամենաթարմ տեղեկատվությունը:

Հնարավոր է՝ Ձեզ ահնրաժեշտ լինի այս հուշաթերթը քննարկել Ձեր զուգընկերոջ, ընկերների և ընտանիքի անդամների հետ:

- Հարցերի դեպքում դիմեք Ձեզ բուժող բժշկին:

Պահպանեք այս հուշաթերթը: **Հնարավոր է այն վերընթերցելու անհրաժեշտություն լինի**:

Բովանդակություն

1. Հիմնական տեղեկատվություն, որը պետք է հիշել
2. Հակաբեղմնավորիչ միջոցներ այն կանանց և դեռահաս աղջիկների համար, ովքեր կարող են հղիանալ
3. Որո՞նք են հղիության ընթացքում վալպրոատ օգտագործելու ռիսկերը:
4. Զարգացման բնածին արատներ
5. Զարգացման և ուսուցման խնդիրներ
6. Ի՞նչ է սա նշանակում ինձ համար:
   - Ես սկսում եմ վալպրոատով բուժում
   - Ես ընդունում եմ վալպրոատ և չեմ պլանավորում ընտանիք կազմել
   - Ես ընդունում եմ վալպրոատ և պլանավորում եմ ընտանիք կազմել
   - Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԻՇԵԼ

- Վալպրոատը դեղ է, որն օգտագործվում է էպիլեպսիայի և երկբևեռ խանգարման բուժման համար:
- Կանայք և աղջիկները վալպրոատ պետք է ընդունեն միայն այն դեպքում, երբ այլ դեղեր բավականաչափ արդյունավետ չեն, քանի որ հղիության ընթացքում վալպրոատի ընդունումը կարող է լուրջ վնաս հասցնել ապագա երեխային: Անկախ հիվանդության զարգացման ընթացքի, մի՛ ընդհատեք վալպրոատ ընդունել՝ առանց բժշկի ցուցման:
- Վալպրոատով բուժման ընթացքում միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ.
    - Օգտագործեք հակաբեղմնավորիչ միջոցներ՝ վալպրոատի կիրառման ողջ ընթացքում
    - Ոչ մի դեպքում մի դադարեցրեք հակաբեղմնավորիչ միջոցների կիրառումը

Ձեր բժիշկը խորհուրդ կտա հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդ:
Սա կօգնի Ձեզ խուսափել չպլանավորված հղիությունից:

- Եթե կասկածում եք, որ հղիացել եք, ապա շտապ այցելեք Ձեր բժշկին:
- Եթե պլանավորում եք հղիանալ, անհապաղ խորհրդակցեք Ձեր բժշկի հետ, իսկ մինչ այդ մի դադարեցրեք հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը:
- Երբեք մի դադարեցրեք վալպրոատի ընդունումն առանց Ձեր բժշկի ցուցումների, քանի որ դա կարող է ավելի վատթարացնել Ձեր հիվանդությունը:
- Մի մոռացեք պարբերաբար (տարեկան առնվազն մեկ անգամ) այցելել նեղ մասնագետին:
- Նշված այցի ժամանակ քննարկեք Ձեզ բուժող բժիշկի հետ և ստորագրեք ռիսկերի ճանաչման ձևաթուղթը՝ համոզվելու համար, որ տեղակացված եք և գիտակցում եք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերը:

2. ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՂԻԱՆԱԼ

Ինչու՞ է ինձ անհրաժեշտ կիրառել հակաբեղմնավորիչ միջոցներ:

Վալպրոատով բուժման ընթացքում միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ.

- Օգտագործեք հակաբեղմնավորիչ միջոցներ՝ վալպրոատի կիրառման ողջ ընթացքում
- Ոչ մի դեպքում մի դադարեցրեք հակաբեղմնավորիչ միջոցների կիրառումը

Ձեր բժիշկը խորհուրդ կտա հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդ:

Սա կօգնի Ձեզ խուսափել չպլանավորված հղիությունից:

Հակաբեղմնավորման ո՞ր մեթոդը պետք է օգտագործեմ:

Ձեր բժշկի հետ քննարկեք Ձեզ համար հակաբեղմնավորման լավագույն մեթոդը:

Մանրամասն խորհրդատվության համար դիմեք Ձեզ բուժող բժշկին, մանկաբարձին կամ գինեկոլոգին:

3. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԱԼՊՐՈԱՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերը ձեր երեխայի համար

Եթե հղիության ընթացքում վալպրոատ եք ընդունում, ապա դա կարող է լուրջ վնաս հասցնել Ձեր ապագա երեխային:

- Էպիլեպսիայի կամ երկբևեռ խանգարումների բուժման այլ դեղերի համեմատ, վալպրոատի կիրառման դեպքում ռիսկերն ավելի մեծ են:
- Ռիսկերը պահպանվում են նույնիսկ վալպրոատի ցածր դեղաչափերի կիրառման դեպքում. որքան բարձր է դեղաչափը, այնքան մեծ է նաև ռիսկը:

Ի՞նչ վնաս կարող է հասցվել իմ երեխային:

Եթե հղիության ընթացքում վալպրոատ եք ընդունում, Ձեր երեխան կարող է ունենալ.

- Բնածին արատներ՝ ծնվելու ժամանակ
- Զարգացման և ուսուցման գործընթացի հետ կապված խնդիրներ՝ երեխայի զարգացման ընթացքում

4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ

Հղիության շրջանում վալպրոատի կիրառումը կարող է երեխաների մոտ առաջացնել լուրջ բնածին արատներ:

Ընդհանուր պոպուլյացիայում կանանց շրջանում.

- յուրաքանչյուր 100 երեխայից 2-3 երեխա ծնվում է բնածին արատով:

Հղիության ընթացքում վալպրոատ ընդունող կանանց շրջանում.

- յուրաքանչյուր 100 երեխայից մոտավորապես 10 երեխա ծնվում է բնածին արատով:

Ի՞նչ բնածին արատներ կարող են առաջանալ:

- Spina bifida (ողնաշարի ճեղքվածք). ողնաշարի ոսկրերը սխալ են զարգանում:
- Դեմքի և գանգի արատներ, այդ թվում՝ «շրթունքի ճեղքվածք» և «քիմքի ճեղքվածք», այսինքն՝ վերին շրթունքի և/կամ դեմքի ոսկրերի ճեղքվածք:
- Վերջույթների, սրտի, երիկամների, միզուղիների և սեռական օրգանների ոչ նորմալ ձևավորում:

- Լսողության խանգարում՝ մինչև խլություն:

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հղիության շրջանում վալպրոատի կիրառումը կարող է ազդել Ձեր երեխայի զարգացման վրա՝ նրա մեծանալու ընթացքում:

Հղիության ընթացքում վալպրոատ ընդունող կանանց շրջանում

- յուրաքանչյուր 100 երեխայից մոտ 30-40 երեխա կարող է ունենալ զարգացման խնդիրներ:

Երկարաժամկետ հետևանքները հայտնի չեն:

Կարող են դրսևորվել զարգացման հետևյալ խանգարումները.

- քայլքի և խոսքի զարգացման ավելի ուշ սկիզբ,
- ավելի ցածր մտավոր ունակություն, քան նույն տարիքի մյուս երեխաների շրջանում,
- խոսքի և լեզվական թույլ հմտություններ,
- հիշողության խնդիրներ:

Երեխաների շրջանում, որոնց մայրերը հղիության ժամանակ ընդունել են վալպրոատ, առկա է աուտիզմի կամ աուտիստական սպեկտրի այլ խանգարումների զարգացման ավելի մեծ հավանականություն: Բացի այդ, նրանք գտնվում են ուշադրության պակասի և/կամ գերակտիվության համախտանիշի զարգացման բարձր ռիսկի տակ:

6. Ի՞ՆՉ Է ՍԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԻՆՁ ՀԱՄԱՐ:

Ստորև նկարագրված իրավիճակներից ընտրեք Ձեզ վերաբերող իրավիճակները և կարդացեք համապատասխան տեղեկատվությունը.

- Ես սկսում եմ վալպրոատով բուժում
- Ես ընդունում եմ վալպրոատ և չեմ պլանավորում ընտանիք կազմել
- Ես ընդունում եմ վալպրոատ և պլանավորում եմ ընտանիք կազմել
- Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ

Ես սկսում եմ վալպրոատով բուժում_Ձեզ բուժող բժիշկը կբացատրի, թե ինչու է կարծում, որ վալպրոատը Ձեզ համապատասխան բուժման միջոցն է և Ձեզ կներկայացնի բոլոր հայտնի ռիսկերը.

- Եթե Դուք **չափազանց երիտասարդ եք հղիանալու համար**.
    - Ձեր բժիշկը պետք է Ձեզ նշանակի վալպրոատ միայն այն դեպքում, երբ այլ դեղերն արդյունավետ չեն:
    - Կարևոր է, որ Դուք և Ձեր ծնողը/խնամակալը տեղյակ լինեք հղիության շրջանում վալպրոատ օգտագործելու ռիսկերի մասին: Այսպես Դուք կիմանաք, թե ինչպես վարվել, երբ բավական հասուն կլինեք երեխաներ ունենալու համար:
    - Դուք կամ Ձեր ծնողը/խնամակալը պետք է անհապաղ դիմեք նեղ մասնագետի, եթե վալպրոատ կիրառելու շրջանում սկսվել է առաջին դաշտանը:
- Եթե Դուք արդեն բավականաչափ **հասուն եք հղիանալու համար**.
    - Ձեր բժիշկը Ձեզ վալպրոատ պետք է նշանակի միայն այն դեպքում, եթե հղի չեք և օգտագործում եք հակաբեղմնավորիչ միջոցներ:
    - Նախքան վալպրոատի օգտագործումը սկսելը, իսկ հետագայում՝ ըստ անհրաժեշտության, բժիշկը Ձեզ կխնդրի անցնել հղիության թեստ: Դա կատարվում է՝ համոզվելու համար, որ չեք հղիացել:
    - Վալպրոատ կիրառելու ընթացքում միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ.
        - Օգտագործեք հակաբեղմնավորիչ միջոցներ՝ վալպրոատ կիրառելու ամբողջ ժամանակահատվածում
        - Ոչ մի դեպքում մի դադարեցրեք հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը

Ձեր բժիշկը Ձեզ խորհուրդ կտա հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդ:

Դա անհրաժեշտ է, որպեսզի հավաստիանաք, որ չեք հղիանա:

- Բուժման ընթացքը պարբերաբար (տարեկան առնվազն մեկ անգամ) պետք է վերանայեք Ձեր բժշկի հետ:

- Նախնական այցի ժամանակ Ձեր բժիշկը Ձեզ կխնդրի ընթերցել Ռիսկերի ճանաչման տարեկան լրացվող ձևաթուղթը: Դա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք և հասկանաք հղիության ընթացքում վալպրոատ կիրառելու հետ կապված բոլոր ռիսկերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև, խորհուրդներ ստանաք վալպրոատի կիրառման շրջանում հնարավոր հղիությունը կանխելու վերաբերյալ:

- Եթե **որոշել եք ընտանիք կազմել**, հնարավորինս շուտ այդ մասին խոսեք Ձեր բժշկի հետ:
    - Մի դադարեցրեք վալպրոատի ընդունումը և հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը, քանի դեռ այդ հարցը չեք քննարկել Ձեր բժշկի հետ:
    - Դուք պետք է Ձեր բժշկի հետ խորհրդակցեք Ձեր երեխայի առողջությանը սպառնացող ռիսկերի և Ձեր հիվանդությունը վերահսկողության տակ պահելու մասին:
    - Դուք և Ձեր բժիշկը պետք է որոշեք, թե ինչպես եք շարունակելու բուժումը՝ հղիություն պլանավորելուց առաջ:

<u>Ես ընդունում եմ վալպրոատ և չեմ պլանավորում ընտանիք կազմել</u>

Եթե կիրառում եք վալպրատ, միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ և մի պլանավորեք երեխա ունենալ:

- Օգտագործեք հակաբեղմնավորիչ միջոցներ՝ վալպրոատ կիրառելու ամբողջ ժամանակահատվածում
- Ոչ մի դեպքում մի դադարեցրեք հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը

Դիմեք Ձեզ բուժող բժշկին կամ գինեկոլոգին / մանկաբարձին / ընտանիքի պլանավորման կենտրոնի մասնագետին՝ հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ խորհուրդատվություն ստանալու համար:

Եթե կասկածում եք, որ հղիացել եք, ապա անմիջապես խորհրդակցեք Ձեր բժշկի հետ:

Մի՛ ընդհատեք վալպրոատի ընդունումն առանց բժշկի հետ խորհրդակցելու՝ նույնիսկ եթե հղիացել եք, քանի որ դա կարող է վտանգավոր լինել Ձեր և Ձեր երեխայի համար: Պարբերաբար (տարեկան նվազագույնը մեկ անգամ) Ձեզ անհրաժեշտ կլինի բուժող բժշկի հետ գնահատել Ձեր բուժման ընթացքը:

Տարեկան այցի ժամանակ Ձեր բժիշկը Ձեզ կխնդրի ընթերցել Ռիսկերի ճանաչման ձևաթուղթը: Դա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք և հասկանաք հղիության ընթացքում վալպրոատ կիրառելու հետ կապված բոլոր ռիսկերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև, խորհուրդներ ստանաք վալպրոատի կիրառման շրջանում հնարավոր հղիությունը կանխելու վերաբերյալ:

<u>Ես ընդունում եմ վալպրոատ և պլանավորում եմ ընտանիք կազմել</u>

Եթե պլանավորում եք երեխա ունենալ, նախ խոսեք Ձեր բժշկի հետ, բայց, միևնույն ժամանակ՝

- **Շարունակեք ընդունել վալպրոատ**
- **Շարունակեք օգտագործել հակաբեղմնավորիչ միջոցներ, մինչև կխոսեք բժշկի հետ**:

Կարևոր է, որ չհղիանաք, քանի դեռ այդ հարցը չեք քննարկել Ձեր բժշկի հետ:

- Հնարավոր է, որ նախքան հղիանալը բժիշկը Ձեզ այլ դեղ նշանակի, որպեսզի համոզվի, որ Ձեր հիվանդությունը կայուն վիճակում է:
- Դուք պետք է քննարկեք, թե ինչ կարող եք անել Ձեր երեխայի առողջությանը սպառնացող ռիսկերը նվազեցնելու համար՝ միաժամանակ Ձեր հիվանդությունը վերահսկողության տակ պահելով:
- Խորհրդակցե՛ք Ձեր բժշկի հետ ֆոլաթթվի կիրառման անհրաժեշտության մասին, եթե պլանավորում եք հղիանալ: Ֆոլաթթուն կարող է նվազեցնել ողնաշարի ճեղքվածքի (Spina bifida) և վաղաժամ վիժման վտանգը, որոնք առկա են բոլոր հղիությունների ժամանակ: Այնուամենայնիվ, վալպրոատի կիրառմամբ պայմանավորված բնածին արատների առաջացման ռիսկի նվազեցման հավանականությունը փոքր է:

Պարբերաբար (տարեկան առնվազն մեկ անգամ) Ձեզ անհրաժեշտ կլինի բուժող բժշկի հետ վերանայել Ձեր բուժման ընթացքը:

Այդպիսի այցերի ընթացքում Ձեր բժիշկը կխնդրի Ձեզ ընթերցել Ռիսկերի ճանաչման տարեկան ձևաթուղթը: Դա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք և հասկանաք բոլոր ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ստանաք հղիության շրջանում վալպրոատի կիրառման հետ կապված խորհուրդներ:

<u>Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ</u>

Եթե կասկածում եք, որ հղիացել եք.

Մի դադարեցրեք վալպրոատի ընդունումը, քանի որ Ձեր էպիլեպսիան կամ երկբևեռ խանգարումը կարող է սրվել:

Անմիջապես խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի հետ: Այդպես Դուք կկարողանաք քննարկել որոշակի տարբերակներ: Հնարավոր է, որ բժիշկը Ձեզ նշանակի մեկ այլ դեղ և բացատրի, թե ինչպես պետք է վալպրոատից անցնել նոր դեղի կիրառման:

Այն երեխաների շրջանում, որոնց մայրերը հղիության ընթացքում կիրառել են վալպրոատ, բարձր է՝

- բնածին արատների,

- զարգացման և ուսուցման գործընթացի խնդիրների առաջացման ռիսկը:

Սա կարող է լրջորեն ազդել Ձեր երեխայի կյանքի վրա:

Որոշ դեպքերում հնարավոր չէ վալպրոատից անցնել մեկ այլ դեղի կիրառման: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար դիմեք Ձեր բժշկին:

Այդպիսի այցերի ընթացքում Ձեր բժիշկը խորհուրդ կտա Ձեզ ընթերցել Ռիսկերի ճանաչման տարեկան ձևաթուղթը: Դա անհրաժեշտ է, որպեսզի Դուք իմանաք և հասկանաք բոլոր ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ստանաք հղիության շրջանում վալպրոատի կիրառման հետ կապված խորհուրդներ:

Անհրաժեշտ է լինել հսկողության տակ, որպեսզի՝

- հավաստիանանք, որ Ձեր հիվանդությունը վերահսկվում է
- հնարավոր լինի հետևել Ձեր երեխայի զարգացմանը: